Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մարտի 10-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև Բելառուսի Հանրապետությունում Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության հիմնման, արտոնությունների և իմունիտետների մասին

Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով ամրապնդել և զարգացնել Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության հետագա բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը,

հիմնվելով 1992 թվականի մարտի 13-ի՝ Անկախ պետությունների լիազոր ներկայացուցչությունների մասին Համաձայնագրի և 1993 թվականի դեկտեմբերի 24-ի՝ Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում մասնակից պետությունների մշտական լիազոր ներկայացուցչությունների մասին Կանոնադրության վրա,

ցանկանալով սահմանել Բելառուսի Հանրապետության տարածքում Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության հիմնման և գործունեության, ինչպես նաև արտոնություններ և իմունիտետներ տրամադրելու պայմանները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Սույն Համաձայնագրով Բելառուսի Հանրապետությունը համաձայնում է, որ իր տարածքում հիմնվի Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություն:

2. Բելառուսի Հանրապետության տարածքում Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության հիմնումն ու գործունեությունը Բելառուսի Հանրապետության համար լրացուցիչ ծախսեր չի առաջացնում:

Հոդված 2

1. Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունը, ներկայացուցչության ղեկավարը, անձնակազմի անդամները (դիվանագիտական անձնակազմը, վարչատեխնիկական անձնակազմը և սպասարկող անձնակազմը), դիվանագիտական և վարչական անձնակազմի անդամների հետ բնակվող ընտանիքի անդամները, դիվանագիտական և վարչատեխնիկական անձնակազմի մասնավոր տնային աշխատողները, շենքը, ներկայացուցչության փաստաթղթերը և արխիվը Բելառուսի Հանրապետության տարածքում օգտվում են նույն արտոնություններից ու

իմունիտետներից և կրում են նույն պարտականությունները, որոնք սահմանված են 1961 թվականի ապրիլի 18-ի՝ Դիվանագիտական կապերի մասին Վիեննայի Կոնվենցիայով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արտոնություններն ու իմունիտետները չեն տարածվում Բելառուսի Հանրապետության քաղաքացիների վրա:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ցանկացած վեճ, համաձայնության գալու նպատակով, լուծվում են Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև խորհրդակցությունների ճանապարհով:

Հոդված 4

Սույն Համաձայնագրում փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն Համաձայնագրի անբաժանելի մաս համարվող համապատասխան արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կատարված է Աշխաբադ քաղաքում, 2014 թվականի նոյեմբերի 20-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կողմից՝ **Բելառուսի Հանրապետության կողմից՝**